Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 31-05-2023 թ. որոշմամբ
««ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՔՈԼԵՋ»»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2022 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՔՈԼԵՋ»
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 4/4
1.3 Պետական գրանցման համարը		222.160.107278
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2012-05-30
1.5 ՀՎՀՀ-ն		00114092
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)11200133
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		http://www.lpfa.am
1.8 Էլեկտրոնային փոստը		lpfarmenie@gmail.com
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
Եվրոլայն ՍՊԸ		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Հովհաննես Հովհաննիսյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	45	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	50,000	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
	Միջին մասնագիտական կրթություն	438,600
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Միջին մասնագիտական կրթություն	248,531,044
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		

9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Միջին մասնագիտական կրթություն	233,487,513	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	233,487,513	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	233,487,513	

Նշումներ՝

«Հայաստանում ֆրանսիական քոլեջ» հիմնադրամի 2022թ. աուդիտը իրականացվում է «Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ-ի կողմից և գտնվում է ընթացիկ փուլում. որի հետևանքով աուդիտորական եզրակացությունը կկցվի գործընթացն ավարտվելու պես:

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 6 էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիա ԱԾ N 1 20 0284

Տրված՝ 18.12.2020 Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների Պալատ հասարակական կազմակերպության խորհրդի թիվ 11ա որոշմամբ

«Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ

ՀՀ,ք.Երևան 0010

Տիգրան Մեծ 4

Հեռ. +374 10 524 724

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Հայաստանում ֆրանսիական քոլեջ»

Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին և ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայաստանում ֆրանսիական քոլեջ» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում 2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի ֆինանսական վիճակը, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

Կարծիքի հիմք

Աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների

աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համապատասխան սույն ֆինանսական հաշվետվությունների կազմման, ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համակարգի ապահովման համար, որը ղեկավարությունը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու, անհրաժեշտության դեպքում՝ անընդհատ գործելու հետ կապված հարցերը բացահայտելու և Հիմնադրամի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հիմնադրամը, ընդհատել դրա գործունեությունը, կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ դիտարկված, զերծ են սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից, և ներկայացնել աուդիտորական հաշվետվություն, որը ներառում է մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, ինչը, սակայն, երաշխիք չէ, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումները, եթե այդպիսիք առկա են: Ֆինանսական հաշվետվություններում խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, երբ ողջամտորեն կարելի է ակնկալել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացրած աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն աուդիտի ողջ ընթացքում: Մենք նաև իրականացնում ենք հետևյալը.

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվություններում առկա էական խեղաթյուրումների ռիսկը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Դիտարկում ենք աուդիտին առնչվող ներքին վերահսկողության համակարգը՝ նպատակ ունենալով մշակել համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ կարծիք արտահայտել Հիմնադրամի ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և առնչվող տեղեկատվության բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա պարտավոր ենք աուդիտորական հաշվետվությունում հղում կատարել ֆինանսական հաշվետվություններում ներկայացված համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր աուդիտորական եզրակացությունը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական հաշվետվության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այսուհանդերձ, ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել Հիմնադրամի գործունեության անընդհատության դադարեցմանը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, տեղեկացնում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող էական թերությունների մասին:

«Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ

Աղավնի Բաբայան

Տնօրեն-բաժնետեր
առաջադրանքի պատասխանատու

2023 թ. հոկտեմբերի 26

Երևան, Հայաստանի Հանրապետություն

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2022թ.	2021թ.
Շարունակվող գործունեություն			
Հասույթ	9	248,673	220,263
Վաճառքի ինքնարժեք		(55,401)	(59,357)
Համախառն շահույթ		193,272	160,906
Այլ եկամուտներ		296	260
Իրացման ծախսեր		(60,000)	(23,607)
Վարչական ծախսեր	10	(98,149)	(86,677)
Այլ ծախսեր		(7,016)	-
Ֆինանսական ծախսեր		(12,900)	(17,839)
Շահույթ մինչև հարկերը		15,503	33,043
Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)	12	(6,777)	(5,947)
Տարվա շահույթ		8,727	27,096
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		8,727	27,096

Միեր Շահգելդյան
տնօրեն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2022թ.	2021թ.
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	3	177,408	184,862
Հետաձգված հարկային ակտիվներ		246	-
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		177,654	184,862
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ			
Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	4	82,650	49,400
Մնացորդներ դրամարկղում և բանկում	5	11,185	11,455
Դեբիտորական պարտքեր շահութահարկի գծով		8,815	
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		96,650	60,855
Ընդամենը ակտիվներ		274,304	245,717
Բաժնետիրական կապիտալ		50	50
Սեփական կապիտալի այլ տարրեր		-	-
Կուտակված շահույթ/ վնաս/		37,032	31,726
Ընդամենը սեփական կապիտալ		37,082	31,726
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	6	148,748	174,639
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		148,748	174,639
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	7	86,863	37,431
Շահութահարկի գծով պարտավորություններ	8	-	1,694
Այլ պարտավորություններ		1,611	177
Ընդամենը պարտավորություններ		237,222	213,941
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		274,304	245,717

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2023թ. Սեպտեմբերի 21 -ին՝

Միեր Շահգելդյան
տնօրեն

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 09.11.2023 22:14